ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հուզանք ու Զանգ» կատարողական արվեստի նախագծի
աշխատանքների իրականացման վերաբերյալ

ՀՀկրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի **16.09.2019 թ. N 82-Ա/2 հրամանինև «ԱԺԶ» մշակութային ՀԿ-ի** նախագահիհետ կնքված N 441պայմանագրով նախատեսված պահանջներին համապատասխան՝ կազմակերպությունը սահմանված ժամկետներում ապահովել է **«Հուզանք ու Զանգ» կատարողական արվեստի նախագծի** աշխատանքների իրականացումը և սահմանված ժամկետում ներկայացրել բովանդակային հաշվետվություն:

2019թ. նոյեմբերի 2-ին,Երևանի մետրոպոլիտենի «Հանրապետության հրապարակ» կայարանի հարակից տարածքում իրականացվել է «Հուզանք ու Զանգ» կատարողական արվեստի նախագիծը, որը, ինչպես նշված է եղել հայտում, պետք է վիզուալ անիմացիաներով թարգմաներ ֆուտուրիստական պոեզիան և տարածքի ճարտարապետությունը: Կատարողը ներկայացրել է վերոնշյալ պայմանագրի 2.3.3. կետի պահանջներին համապատասխան նյութերը՝ բովանդակային հաշվետվությունը, լուսանկարները, գովազդային ազդագրերը, ներկայացման տեսանյութը՝ կրիչով: Հաշվետվության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հատկացված միջոցներն ուղղվել են ներկայացված հայտի իրականացմանը: Սակայն, չնայած այն հանգամանքին, որ Կատարողի կողմից ժամանակին և պայմանագրի կետերին համապատասխան իրականացվել է հաշվետվության պարտավորությունները, այնուամենայնիվ, վարչությունը բովանդակային՝ գեղարվեստական, գեղագիտական և մասնագիտական առումով բավարար չի գնահատում կատարված աշխատանքը:

Խնդիրն այն է, որ անկատար են մնացել հայտում ներկայացված հավակնոտ ու նորարարական թվացող բոլոր դրույթները: Նախապես պետք է նշել, որ վարչության գնահատականը պայմանավորված չէ զուտ հանրային խիստ բացասական արձագանքով, և որպես կողմնորոշիչ է ընդունվել բացառապես մասնագիտական չափանիշը: Ավելին, հենց մասնագիտական որակի առկայության դեպքում հնարավոր կլիներ կանխել

հանրային համանման արձագանքները: Հայտնի է, որ պերֆորմանսը, պերֆորմատիվությունը լայն իմաստով, հակված է որոշակի սադրանքի, հանդիսատեսային միջավայրի ընդվզման, կարծրատիպերի հաղթահարման, սակայն այս ամենը չի կարող լինել ինքնանպատակ, մասնագիտորեն և գեղարվեստորեն չհիմնավորված:

Այսպես՝

• Հայտում նշված է, որ «Հուզանք ու Զանգը» կատարողական արվեստի նախագիծը համադրում է ժամանակակից պարն ու պոեզիայի ռիթմը: Ներկայացումը 1920-ական թվականների **ֆուտուրիստական պոեզիայի** (Կարա Դարվիշ, Գևորգ Աբով, Ազատ Վշտունի, Եղիշե Չարենց) հետազոտական/էքսպերիմենտալ վերընթերցումն է՝ Լիլիթ Պետրոսյանի հեղինակային ստեղծագործությունների միջամտություններով և Հասմիկ Թանգյանի ապագայամետ շարժման աշխարհագրությամբ: Նախագիծը նպատակունի հարցադրելու և առաջարկելու հանրային տարածքում մարմնի լինելիության նոր ձևեր, որոնք վաղուց արդեն առաջարկվել են անցյալում՝ վերոնշյալ պոետների կողմից: Վերլուծելով «ԱԺԶ» մշակութային ՀԿ-ի կողմից ներկայացված բովանդակային հաշվետվությունը՝ կարող ենք փաստել, որ հայտում ներկայացված «Հուզանք ու Զանգ» կատարողական արվեստի նախագծի հայեցակարգը, նկարագրությունը և իրականացված բեմադրությունը բովանդակային առումով իրար չեն համապասխանում; քանի որ անորոշ է մնացել հայտում նշված հեղինակների տեղն ու դերը Հասմիկ Թանգյանի և Լիլիթ Պետրոսյանի՝ ժամանակակից արվեստի և կնոջ խնդիրների մասին պատկերացումներում:

• Նախագծի հիմնախնդիրներից է եղել նաև «հետազոտել պարի և խոսքի խաչման կետերը և գտնել արդիական լեզու՝ թարգմանել ու այն ներկայացման: Գտնել ձևեր, որոնք առավելագույնս կարտահայտեն դրված սոցիալական հիմնախնդրի արվեստային լուծումները»: Պարզ է, որ պերֆորմանսում մարմնի մասին խոսելիս նկատի չենք ունենում մարմնի խորեգրաֆիկ կատարելությունը, այլ՝ մարմնով հարուցվող, արտադրվող ու վերարտադրվող իմաստները, որոնք առաջ են բերում ասոցիացիաներ, մեկնություններ ու զգացմունքներ, մշակում են սոցիալ-հոգեբանական և գեղարվեստական բովանդակություն: Պերֆորմատիվ արվեստներում մարմնով հատվում են կերպարվեստը, երաժշտականությունը և բեմադրական արվեստը, մինչդեռ այս ներկայացման մեջ

մշակված չեն «գործող մարմինների» կոմպոզիցիոն դասավորությունը, տարածքի և մարմնի հարաբերությունները, համադրված չեն, ինչպես հայտում է նշված, «ֆուտուրիստական պոեզիան և տարածքի ճարտարապետությունը», անմշակ է ձայնային բաղադրիչը: Ակնհայտ է պրոֆեսիոնալ կատարման խոցելիությունը:

- Չեն ապահովվել նաև «ԱԺՀ» մշակութային ՀԿ-ի կողմից ներկայացված ակնկալվող արդյունքները՝ հետաքրքրված համայնքի ձևավորում և ընդլայնում, մարմին և ձայն համադրության ուսումնասիրությունների խթանում, պատմական անտեսված գրականության վերագնահատում, մարմնի հանդեպ վերաբերմունքի փոփոխություն,նոր շարժման արժեվորում, նոր ձայնի և խոսքի շուրջ մտորելու առիթներ: Մինչդեռ հայտում նշված է. «Ներկայացումը կարող է ոգեշնչում լինել շատ կին արվեստագետների համար և աջակցել նրանց՝ բարձրացնելու իրենց հուզող խնդիրները, ինչպես նաև հետևելու և հետազոտելու իրենց հետաքրքրությունները»: Հաշվետվության մեջ ներկայացման, արդյունքում ձևավորված հավելյալ արժեքի, նշված ակնկալվող արդյունքների իրականացման վերաբերյալ ոչինչ ասված չէ:

Ելնելով վերոնշյալից, «Հուզանք ու Զանգ» կատարողական արվեստի նախագծի աշխատանքների իրականացումը գնահատում ենք **ոչ բավարար:**

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ՝ Ա. ԽԶՄԱԼՅԱՆ

ՀՀ ԿԳՄՍ Ժամանակակից արվեստի վարչության պետ՝ Ա. ՂԱՋԱՐՅԱՆ